ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ք. Գորիս **13 հունվարի 2025թ**

ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում են Գորիս համայնքի ավագանու 21 անդամներից 12-ը՝ Ա. Առուշանյանը, Ա.Աղաջանյանը, Մ. Առուստամյանը, Լ. Բաղդասարյանը, Ա. Գալստյանը, Հ. Դիլանչյանը, Կ. Լազարյանը, Գ. Հակոբյանը, Մ. Հակոբյանը, Ս. Մկրտչյանը, Ա. Սոնյանը և Ա. Տոռոզյանը:

Նիստն առցանց հեռարձակվում է:

Նիստը վարում է Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը:

Նիստն արձանագրում է աշխատակազմի քարտուղար Ա. Բաղդագյուլյանը:

Ա. Առուշանյանը ավագանուն ներկայացրեց 2025թվականի հունվարի 13-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 231-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԽՆՁՈՐԵՍԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,09 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցերի քննարկումից հետո՝ որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 11, դեմ 0, ձեռնպահ՝ 0 (Սոնա Մկրտչյանը չի մասնակցել քվեարկությանը) ավագանին որոշեց

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 13-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 231-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԽՆՁՈՐԵՍԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,09 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<u>Օրակարգի 1-ին հարց՝</u>

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 231-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(զեկուցող՝ Սուսաննա Մկրտչյան)

Հարցերի քննարկումից հետո՝ որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 10, դեմ 0, ձեռնպահ՝ 1 (Մարգարիտ Առուստամյան) (Սոնա Մկրտչյանը չի մասնակցել քվեարկությանը) ավագանին որոշեց

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Գորիս համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 231-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն կից հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

<u>Օրակարգի 2-րդ հարց՝</u>

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(զեկուցող՝ Գարեգին Փարսյան)

Հարցերի քննարկումից հետո՝ որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 11, դեմ 0, ձեռնպահ՝ 0 (Սոնա Մկրտչյանը չի մասնակցել քվեարկությանը) ավագանին որոշեց

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 2003 թվականի հոկտեմբերի 8-ի «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 1997 թվականի մարտի 14-ի թիվ 51 որոշումը և Գորիս համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. 2025 թվականին բաց դասական աճուրդով օտարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ անշարժ գույքերը.
   1) ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Գորիս քաղաքի Ս. Առաքելյան փողոցի թիվ 4/11 հասցեի անշարժ գույքը (48,6քմ երկրորդական հումքի ընդունման կետ և դրա օգտագործման ու սպասարկման համար առանձնացված 0.01117 հեկտար մակերեսով հողամաս, կադաստրային ծածկագիր՝ 09-003-0252-0035), աճուրդի մեկնարկային գինն է՝ 3150058 (երեք միլիոն մեկ հարյուր հիսուն հազար հիսունութ) ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ գույքի գնահատման հաշվետվության («Կապիտալ Գեո» ՍՊԸ, Որակավորման վկայական N ԳԳ 2024-11):
   2) ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Գորիս քաղաքի Օրբելյանների փողոցի թիվ 20/2 հասցեի անշարժ գույքը (117,3քմ պահեստը, 0,7քմ պարիսպը և դրանց օգտագործման ու սպասարկման համար առանձնացված 0,01695 հեկտար մակերեսով հողամաս, կադաստրային ծածկագիր՝ 09-003-0077-0024), աճուրդի մեկնարկային գինն է՝ 5300000 (հինգ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ՝ համաձայն անշարժ գույքի գնահատման հաշվետվության («Կալգարի» ՍՊԸ, Որակավորման վկայական N ԳԳ 2022-44):
2. Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել նախատեսված հողամասերի աճուրդի կազմակերպումը և իրականացումը:

<u>Օրակարգի 3-րդ հարց՝</u>

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԽՆՁՈՐԵՍԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,09 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկուցող՝ Գարեգին Փարսյան)

Հարցերի քննարկումից հետո՝ որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 11, դեմ 0, ձեռնպահ՝ 0 (Սոնա Մկրտչյանը չի մասնակցել քվեարկությանը) ավագանին որոշեց

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2022 թվականի սեպտեմբերի 20-ի N ՍԹ/10305-2022 գրության պարզաբանումը, Գորիս համայնքի ղեկավարի կողմից տրված 2023 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 106 նախագծման թույլտվությունը և Գորիս համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Խնձորեսկ գյուղում գտնվող (կադաստրային ծածկագիր 09-045-0132-0165) գյուղատնտեսական նշանակության 0,09հա արոտավայր հողատեսքը փոխադրել ջրային հողերի կատեգորիա՝ «ջրամբարներ» գործառնական նշանակությամբ՝ 800խմ մակերեսով գրունտային հիքով ոռոգման կարգավորիչ ջրամբար կառուցելու համար:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Օրակարգի բոլոր հարցերը սպառվեցին, նիստը ավարտվեց ժամը՝ 15:40-ին:

1. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ
2. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ
3. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ
4. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
5. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ
6. ԴԻԼԱՆՉՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ
7. ԼԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
8. ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
9. ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԵ
10. ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ
11. ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
12. ՏՈՌՈՋՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

13 հունվարի 2025թ